# ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակը հաստատելու մասին» թիվ 71-Ն հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 71-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակը հաստատելու մասին» թիվ 71-Ն հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակում /այսուհետ՝ Աղյուսակ/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետի «Մինչև 2026» բառերը փոխարինել «Մինչև 2030» բառերով:

2) Աղյուսակի 3-րդ բաժնի 5-րդ կետում «**5000-2120 ՄՀց**» բառերը

փոխարինել «**5000-5255 ՄՀց**» բառերով:

3) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել

«(բացառությամբ`

8192 ՄՀց

8248 ՄՀց

8304 ՄՀց

8360 ՄՀց)» բառերը:

4) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «221,4 ՄՀց» բառերը:

5) Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետի «**147,350**» թվից հետո լրացնել «**ՄՀց**» բառը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: